ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Արդին, 25 յուլիսի

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան Արդինի ճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ, երէկ, ամսոյս 24-ին, տեղի ունեցաւ մի ժողով, որ խորհրդակցութեան նիւթ դարձրին թէ ինչպէս և ինչ ձևով տեղումս տօնեն հայ տպագրութեան 400 և հայ տառերի գիւտի 1500 ամեայ յոբելեանները։

Ժողովին մասնակցում էին Արդինի երկու համայնքի ինտելիգենցիան՝ հայ կաթոլիկաց և լուսաւորչականների։

Ժողովը նախագահ ընտրելով Գրիգոր քահանայ Եսայեանին, իսկ քարտուղար պ. Կարապետ Տէր-Բաղդասարեանին անցաւ օրակարգին։

Ժողովը գլխաւորապէս զբաղուեց ազգային այդ երկու Մեծ Յոբելեանները յաւերժացնելու խնդրով։ Եղան դանազան առաջարկութիւններ, սակայն վերջը որոշուեց տեղիս հասարակական անփառունակ գրադարան-ընթերցարանը բարեկարգել և հարստացնել հայկական բաժինը ի յիշատակ այդ մեծ տօնին։

Այնուհետև ժողովը զբաղուեց տօնելու ձևի մասին։ Եղան առաջարկութիւններ, թէ՝ ի նկատի ունենալով, որ Արդինի ազգաբնակութիւնը գրեթէ հայ տարրից է բաղկացած, ուստի մի օր յայտարարել ամբողջ քաղաքում ազգային այդ երկու միացեալ յոբելեանների տօնի համար և շրջիկ խըմբակների միջոցով քաղաքում հանդանակութիւն կատարել՝ այնպէս, ինչպէս «Սպիտակ ծաղկի» օրերն են լինում, ծախելով գրքեր և այլն։

ժողովականներից մի քանիսը գտան, որ կառավարութիւնը հաղիւ թէ այդ միջոցը թոյլատրի, ուստի ժողովը բաւականացաւ միայն հետևեալով, որը և ընդունեց. առաջիկայ օգոստոսի 4-ին կամ 11-ին քաղաքիս զբօսավայրում կազմակերպել բացօդեայ մի զբօսանք, ուր կը լինի բանախօսութիւն, երաժշտութիւն, երգեցողութիւն և այլն. բացի այդ, հէնց նոյն օրը երեկոյեան սարքել ներկայացում—երեկոյթ, ուր սկզբում դարձեալ կը լինի մի բանախօսութիւն։

Այդ նպատակով ժողովը ընտրեց մի յանձնաժողով, որի անդամներն են՝ Գրիգոր քահանայ Ենայեան, Հ. Գ. Գապոյեան, Սեդրակ Քեքէչեան, բժշ. Յ. Սոզոյեան, ուսուցիչ Յ. Պետոյեան, կար. Տէր-Բաղդասարեան և Մ. Ազնաւուրեան, որոնց և յանձնարարեց հոգս տանել այդ մասին։

Ի վերջոյ կարևոր ենք համարում նկատել հետևեալը. մեզ թւում է. որ այն առարկութիւնը թէ իբր պատշաճաւոր իշխանութիւնը թոյլ չի տայ գրքեր վաճառելով հանգանակութիւն կատարել՝ անհիմն է, որովհետև չենք կարծում թէ կառավարութիւնը այդ ազգային տօնին նպաստող նման ձեռնարկութեան խոչընդոտ հանդիսանայ։ Դա «հայ գրքի» գերագոյն տօնն է և նման միջոցը խրախուսելի, որովհետև նէր տուող մարդիկ գէթ կը ստանան մի-մի գիրք՝ թէկուզ գնից մի բան աւելի վճարելով։

Այդ միջոցի նպատակայարմարութիւնը «Հորիզոնում» պ. Նիկ. Աղբալեանը իր մի յօդուածում բաւականին գեղեցիկ կերպով պարզած էր։ Նորից կրկնում ենք, որ կառավարութիւնը հաղիւ թէ այդ միջոցի դէմ արգելք հանդիսանայ։ Գոնէ պէտք էր փորձել թոյլատրութիւն խնդրելու։

Amiko